ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1965 Общественные науки

Ս. Ա. Եսայան, Կ. Կ. Ղաֆադարյան

# ՇԱՄՇԱԴԻՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՄԱՄԻՆ

*Շամշադինը հնագիտական առումով Հայաստանի ամենից քիչ ուսումնասիրված շրջաններից մեկն է։ Այստեղից 1958 թ. Հայաստանի պատմական թանգարան է հանձնվել նավուր գյուղում պատահականորեն գտնված բրոնզե երկու կացին, որով և սպառվում է մեր տեղեկությունները Շամշադինի վաղ շրջանի նյութական մշակույթի մասին[1]։*

*Շամշադինը հարավից սահմանակից է Սևանի ավազանին, արևելքից և հյուսիս-արևելքից՝ Գետաբեկին ու Շամխորին, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից՝ Լազախի ու Նոյեմբերյանի շրջաններին։*

*Բարձրաբերձ, անմատչելի լեռները և խոր ձորերը տեղի բնակչության համար եղել են բնական ամրություններ, իսկ լեռնային արոտավայրերը, անտառները և պղնձի ու երկաթի հարուստ հանքավայրերը նպաստել են հին մարդու կյանքի զարգացմանը այդ վայրերում։*

*Շրջանում ամենուրեք պահպանվել են հնագույն, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցների մնացորդներ և բազմաթիվ դամբարաններ, որոնց ուսումնասիրության արդյունքները, անկասկած, նշանակալի չափով կլրացնեն մեր պատկերացումները բրոնզեդարյան Հայաստանի նյութական մշակույթի մասին։*

*Հայաստանի կիկլոպյան ամրոցների դասակարգման առաջին փորձը, Արագածի նույնանման հուշարձանների ուսումնասիրության հիման վրա, կատարել է Թ. Թորամանյանը, որը նրանցից հնագույնները վերագրել է նորքարեդարյան ժամանակաշրջանին։ Այնուհետև, երեսունական թվականների սկզբին նյութական մշակույթի ակադեմիայի Հայաստանի ինստիտուտը և հնությունների կոմիտեն ձեռնարկել են գիտական մի քանի համատեղ արշավներ, որոնց նպատակն էր հաշվառել և ուսումնասիրել Արագածի և Սևանի ավազանի հնագույն ամրոցները[2]։ Հավաքված նյութը հնարավորություն տվեց բացահայտե-*

---

1 Դրանից հետո Հ. Մարտիրոսյանի կողմից թանգարան են հանձնվել մի քանի բրոնզե և կավե սափորներ Թովուզ գյուղից, և պատահականորեն բերդում հայտնաբերվել է անտիկ դրամների գանձ։ Միջնադարյան ժամանակաշրջանից հայտնի են Բերդ ավանի հայտնի միջնադարյան ամրոցը, մի շարք եկեղեցիներ և վանքեր (Խորանաշատ, Նոր Վարագա, Կապտավանք և այլն) և բազմաթիվ վիմագիր արձանագրություններ, որոնք հավաքել են Կ. Գ. Ղաֆադարյանը (1935 թ.) և Ս. Գ. Բարխուդարյանը (1964 թ.)։

2 Թ. Թորամանյան. Նախաքրիստոնեական հայ ճարտարապետությունը, Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի, 1920—1921, էջ 207—225, նույն հեղինակի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942, էջ 11—30։ Л. Т. Гюзалян, Б. Б. Пиотровский, Циклопические крепости Закавказья, СГАИМК 1932, № 1—2, стр. 61—64, Б. Б. Пиотровский, Л. Т. Гюзалян, Крепости доурартского и урартского времени. Проблемы истории материальной культуры, 1932, № 5—6, стр. 51—59. И. И. Мещанинов, Циклопические сооружения Закавказья, ГАИИМК, XIII, 4—7, 1932 г.


ՇԱՄՇԱԴԻՆ-ՂՐՂԻ
ՄԱՍՄԱԼԱՐ ԱՄՐՈՑ
ՄԱՍՇՏԱԲ 1:500

լու կառուցվածքների ժամանակագրական չորս հիմնական խումբ, որոնցից առաջին երկուսը վերաբերում է մեզ հետաքրքրող՝ բրոնզեդարյան և ուրարտական ժամանակաշրջաններին։ Այդ դասակարգումը հիմնականում լինելով ճիշտ, չի նշում յուրաքանչյուր խմբի հուշարձանների առաջացման և որոշակի սահմանները, և մինչև այժմ, կարելի է ասել, չունենք պարզորոշ դասակարգում ըստ ժամանակագրության և կառուցողական սկզբունքների։ Այժմ հնագիտության նոր նվաճումների լույսի տակ կարելի է վերանայել և ճշգրտել այս կառուցվածքների առաջացման ժամանակագրական սահմանը։ Այն փաստը, որ քարակերտ պատեր հայտնաբերվել են Շենգավթի բնակատեղում և այն, որ ներկայումս հայտնի են էնեոլիթյան նյութեր պարունակող կիկլոպյան ամրոցներ (Լճաշեն, Քաղսի, Գեղարոտ, Բելտաշեն) հնարավորություն են տալիս ենթադրելու, որ կիկլոպյան ամրոցների սկիզբը վերագրվում է ուշ էնեոլիթյան ժամանակաշրջանին, սակայն նրանց լայն տարածումը սկսվում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսից։

Հիշատակված նյութերի հայտնաբերումը դրդեց հեղինակներից մեկին (Եսայանին) 1961—1964 թթ. կատարելու Շամշադինի շրջանի հուշարձանների հետախուզական ուսումնասիրություն։ Բերդ, Նավուր, Ջորաթան, Քոլագիր և Ղրղի գյուղերի հողամասերում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ դամբարաններ (քարարկղներ, գրունտային թաղումներ և կուրգաններ)։ Գտնվեցին նաև մի քանի դոլմեն և մենհիր։ Միայն Ղրղի գյուղի շրջանում հաշվառված է 6 կիկլոպյան ամրոց, որոնցից երեքի ուսումնասիրությանն է նվիրված ներկա հոդվածը։ Գյուղի մեջ և վերոհիշյալ երեք ամրոցների շրջակայքում պեղվել է ավելի քան 50 դամբարան։

Հնագիտական և չափագրական նյութերը[3] հնարավորություն են տալիս մոտավոր նշել այս ամրոցների գոյացման ժամանակագրական սահմանները և կատարել որոշ դիտողություններ նրանց կառուցողական ու պաշտպանական սկզբունքների մասին։

ՄԱՍՄԱԼԱՐ ԱՄՐՈՑԸ գտնվում է Ղրղի գյուղից հյուսիս-արևմուտք, երեք կմ հեռավորության վրա, դեպի Բերդ տանող ճանապարհի ձախ կողմում։ Նա գրավում է մոտ 2,5 հեկտար տարածություն և կառուցված է սարահարթի նկատմամբ մոտ 45 մետր բարձրություն ունեցող բլրի վրա, որի լանջերը երեք կողմից ունեն մեծ թեքություն և մասամբ պատված են անմատչելի ժայռերի զանգվածներով (գծ. 1)։ Միայն հյուսիս-արևմտյան կողմերում բլուրն ունի համեմատաբար փոքր թեքություն, որտեղ էլ եղել է ամրոցի ընդհանուր մուտքը։ Բլուրը հորիզոնական ուղղությամբ ջլատված է երեք օղակաձև 20—40 մետր լայնություն ունեցող արհեստական տերրասներով, որոնցից յուրաքանչյուրը արտաքին կողմից եղերված է կիկլոպյան պատերով։ Արևելյան կողմում լրիվ քայքայված և առանձին քարերի ձևով ընդամենը 100 մետր տարածության վրա նշմարվում են բլուրը օղակող չորրորդ պատի հետքերը։ Ամրոցապատերը պահպանվել են մինչև երկու մետր բարձրությամբ և կառուցված են անմշակ և մասամբ կոպիտ մշակված բազալտի և կրաքարի բեկորներով։ Տերրասները շարունակվում են նաև բլրի հարավ-արևմտյան մասում՝ ժայռափոր հսկայական աստիճանների ձևով, որտեղ, բնականաբար, ուվելորդ են եղել տերրասները եղրագծող հենապատերը։ Այս քարակոփ արհեստական տերրասների կառուցումը չի բխել, իհարկե, միայն պաշտպանական նկատառումներից,

3 Ամրոցների չափագրությունն ու տեղագրական հանույթը կատարել է Կ. Ղաֆադարյանը։ Գծագրերի վրա նիշերը պայմանական են։

քանի որ քարափը բնական վիճակում արդեն մեծ խոչընդոտ է եղել հակառակորդի համար, այլ հիմնականում բխել է բլրի մակերեսը մաքսիմալ օգտագործելու և շինարարության համար քար հայթայթելու նպատակներից։

Մասնագիտական գրականության մեջ Հայաստանի բազմաթիվ կիկլոպյան ամրոցներում մի քանի համակենտրոն պատերի գոյությունը բացատրող երկու կարծիք կա։ Առաջինը այն դիտում է որպես պաշտպանական պարսպապատերի սիստեմ (Թորամանյան). երկրորդը ավելի հավանական է համարում նրանց հենապատ լինելը, որոնց նպատակն է եղել ստեղծել օգտագործելի տերրասներ և դիմադրել հողի սահքին (Հաջյան, Գյոզալյան, Պիոտրովսկի)։ Ամենևին չժխտելով երկրորդ տեսակետը, որի բազմաթիվ ապացույցները կան Արագածի նման հուշարձաններում, ցանկանում ենք նշել, որ այս ամրոցում այդ պատերը ունեցել են պաշտպանական դեր։ Այդ մասին է վկայում երրորդ տերրասի պարսպապատի հյուսիս-արևելյան մասում գտնվող երկու մետր ելուստով և 12 մետր երկարությամբ կոնտրֆորսը։

Սրամիտ է կառուցված ամրոցի մուտքը։ Բլրի հյուսիսային մասում տերրասների պատերը չեն միանում, այլ գնալով միմյանց համարյա զուգահեռ՝ միջանկյալ մասերում ստեղծում են բլրի գագաթը տանող գալարապտույտ մի ճանապարհ, որի յուրաքանչյուր ուղղագիծ հատվածը անցնում է վերևի տերրասի պարսպապատի առջևով և պաշտպանվում այդ կողմից։ Երրորդ և չորրորդ տերրասների պատերն այս մասում կորագիծ միանում են իրար՝ կազմելով պաշտպանական աշտարակ կամ բարձունք, որտեղից շատ հարմար պետք է լիներ թշնամուն հարվածել ճանապարհի ցանկացած հատվածում։ Շրջանցմամբ այս աշտարակի գրավմանը կարող էր դիմադրել երրորդ տերրասի պարսպապատի հյուսիս-արևելյան կողմում կառուցված կոնտրֆորսը։ Եթե նկատի ունենանք նաև այն, որ միջցեղային բախումների ժամանակ շրջադարձային, համեմատաբար նեղ մասերում ճանապարհը փակվում էր քարերով կամ գերաններով, ապա կարելի է ասել, որ հյուսիսային՝ առավել խոցելի մասում լրիվ ապահովված է ամրոցի պաշտպանությունը։

Մասմալար ամրոցի մակերեսը ծածկված է փարթամ թփերով ու խոտով ու չեն երևում ամրոցապատերից բացի այլ կառուցվածքների հետքեր։ Չկան նաև նյութական մշակույթի մնացորդներ, բացառությամբ մի քանի ամրողջական և ջարդված նավակաձև աղորիքների, որոնք գտնվել են խոտհունձին չխանգարելու համար հավաքված քարակույտերի մեջ։ Այդ հանգամանքներում դժվարանում է ամրոցի թվագրման հարցը։

Բլրից մոտ 700 մետր արևելք, «Խուրջին հողեր» կոչված վայրում, գտնվում է դամբարանադաշտ՝ Լճաշենի տիպի մեծ կուրգաններով և խոշոր քարարկղներով։ Այստեղ մեր պեղած 12 դամբարաններում գտնվել են Գոլովինոյի տիպի մի թուր, նետասլաքներ, զարդեր, ճարմանդներ և ուշ բրոնզի ժամանակաշրջանին բնորոշ խեցեղեն։ Հետաքրքիր է այն փաստը, որ դամբարաններից մեկի լիցքում հայտնաբերվել է մի աղորիք, նման ամրոցում գտնվածներին։ Հնարավոր է, որ դամբարանադաշտը պատկանել է ամրոցի բնակիչներին, և երկուսն էլ թվագրվում են նույն ժամանակով, սակայն այս փաստը վկայում է, որ ամրոցը գոյություն է ունեցել մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջին, բայց ոչինչ չի ասում ամրոցի կառուցման և անկման ժամանակի մասին։ Այդ հարցերը, թեև ոչ լրիվ, կարելի է պարզել մյուս երկու ամրոցների վերլուծումից հետո։


ՇԱՄՇԱԴԻՆ • ՂՐՂԻ
ՍԵՊՐԻԿ ԱՄՐՈՑ

ՍԵՊՐԻԿ ԱՄՐՈՑԸ գտնվում է Ղրղի գյուղից հյուսիս-արևմուտք, մոտ 2 կմ հեռավորության վրա, Մասմալար ամրոցի հարավային կողմում։ Երեք կողմից շրջապատված են խոր ձորերով և միայն հյուսիսային կողմն է համեմատաբար հարթ։ Այդ կողմից էլ եղել է ամրոցի մուտքը (գծ. 2)։ Հյուսիսային հարթավայրի նկատմամբ բլուրը ունի մոտ 40 մետր բարձրություն, իսկ ձորերի կողմից՝ 150 մետր և ավելի։ Ամրոցը գրավում է 2,5 հեկտար տարածություն։

Քարերի մշակումով, շինարարական և պաշտպանական սկզբունքներով այս ամրոցը նման է նախորդին, որը հիմք է տալիս ենթադրելու, որ երկուսն էլ պատկանում են նույն ժամանակաշրջանին։ Այստեղ էլ բլուրը բոլոր կողմերից օղակված է ռելիեֆին խիստ համապատասխան կառուցված եռաշարք ամրոցապատերով։ Հյուսիսային կողմում, նկատի առնելով այդ լանջի համեմատաբար դյուրամատչելիությունը, երկրորդ և երրորդ տերրասների միջև կառուցված է մի այլ չորրորդ պարիսպ, որի անհրաժեշտությունը չի պայմանավորված ռելիեֆով։ Պաշտպանական մի հարթակ դարձյալ երկրորդ և երրորդ տերրասների միջև կառուցված է բլրի հարավային մասում, որտեղ տերրասները ավելի լայն են և անհրաժեշտություն կա լրացուցիչ պաշտպանության։ Այդ նկատառումներով էլ, հավանաբար, կառուցված է եղել նաև ամրոցի արևելյան կողմում դեպի տերրասները ուղղահայաց նայող պատը, որից հատուկենտ քարեր են պահպանվել։ Սեպրիկ ամրոցի մուտքը պահպանվել է առաջին տերրասի հյուսիս-արևելյան մասում։ Նա սկզբունքորեն նման է Մասմալար ամրոցի մուտքին, սակայն ավելի կատարյալ կառուցվածք ունի։ Այս մասում ներքին պատը ուղիղ անկյան տակ 3,5 մետրի չափով թեքված է դեպի ներս, ստեղծելով մոտ 25 քառակուսի մետր միջանկյալ տարածություն երկու արտաքին և ներքին դռների միջև։ Անցնելով առաջին դռնից և հայտնվելով այս մասում, թշնամին կգտնվեր եռակի շրջապատման մեջ, որը և անհնար կդարձներ երկրորդ դռան (պատնեշի) հաղթահարումը։

Երկրորդ և երրորդ տերրասների մուտքերը չեն պահպանվել, նրանք հավանաբար եղել են ամրոցի հյուսիս-արևելյան մասում և ունեցել են Մասմալարի մուտքերի նման կառուցվածք (գալարապտույտ ճանապարհի սկզբունքով)։ Մասմալարում և Սեպրիկում զուգահեռ պատերի միջև եղած անցումների այդպիսի սիստեմը հարմար լինելով հանդերձ, պաշտպանական տեսակետից քողարկել և մի փոքր հեռվից արդեն աննկատելի է դարձրել ամրոցների մուտքերը։ Այդ թելադրված է եղել նաև ճանապարհը բլրի ռելիեֆի նվազադույն թեքությամբ անցկացնելու նպատակահարմարությունից։ Մուտքի մասում ամրոցապատը պահպանված է մոտ երկու մետր բարձրությամբ, մյուս մասերում ավելի քիչ՝ մեծ մասամբ 1—2 շարք։ Բլրի վրա չի նկատված այլ կառուցվածքի որևէ հետք։ Երրորդ տերրասի պատի ներսի կողմում, քարակույտերի միջից, գտնվել են մի քանի ուղղանկյուն և նավակաձև աղորիքներ, իսկ բլրի ստորոտում, առաջին տերրասի պատի մոտ՝ մի այլ աղորիք 30—50 սմ չափի։ Ի տարբերություն նախորդ ամրոցի՝ այստեղ կարելի է ենթադրաբար որոշել նրա անկման ժամանակը։ Այդ հնարավորությունը մեզ տալիս են առաջին տերրասի պատի ներսի կողմում տեղացիների քանդած և հետագայում մեր զննած քարարկղային դամբարանի նյութերը, որոնցից երկուսը մեզ հանձնեց գյուղի բնակիչ Ա. Աղաբաբյանը։ Առաջինը մանգաղաձև բրոնզե մի իր էր, արտաքին կողմից սրված և, հավանաբար, կարող էր լինել կաշեգործական դանակ, երկրորդը մեկ բռնակով սև փայլեցրած սափոր էր՝ բնորոշ մ. թ. ա.

ՇԱՄՇԱԴԻՆ • ՂՐՂԻ
ՂՈՋԼՈՒ ԱՄՐՈՑ

ՄԱՍՇՏԱԲ 1:500.

ռաջին հազարամյակի սկզբին։ Ամրոցն այդ ժամանակ, ամենայն հավանականությամբ, արդեն լքված էր, քանի որ դժվար է ենթադրել, որ բնակիչները նրա ներսում կատարել են թաղումներ։ Այդպիսի բացառություն կարող էր լինել միայն առաջնորդի նկատմամբ, սակայն հայտնաբերված դամբարանը իր չափերով և պարունակությամբ հեռու է այդպիսին լինելուց։

Այսպիսով, Սևպրիկ ամրոցը գոյություն է ունեցել մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդում և լքվել 1-ին հազարամյակի սկզբներին։ Սեպրիկ և Մասմալար ամրոցներն իրենց ներսում չունեն որևէ շինության հետքեր, և այդ փաստը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ նրանք եղել են ժամանակավոր պատսպարաններ, որտեղ միջցեղային ընդհարումների ժամանակ պաշտպանվել է շրջակայքի բնակչությունը։

Ղոզլու ամրոցը գտնվում է Ղրղի գյուղից արևելք, 15 կմ հեռավորության վրա, Աղնջի գետի աջ ափին, անասնապահական ֆերմայից ոչ հեռու։ Սա տեղադրված է մի փոքր բլրի վրա, որը հյուսիս-արևելյան կողմից սահմանակից է հարթավայրին և նրա նկատմամբ ունի 20—25 մետր բարձրություն (գծ. 3)։ Մյուս երեք կողմերից բլրի լանջերն իջնում են մինչև շրջակա խոր ձորերը։ Ի տարբերություն նախորդ ամրոցների, Ղոզլուն գրավում է միայն բլրի եռանկյունաձև փոքր և հարթ գագաթը 0,7 հեկտար մակերեսով և, բացառությամբ հյուսիս-արևմտյան կողմի, ունի բլրի գագաթի եզրագծով կառուցված միայն մեկ ամրոցապատ։ Հարթավայրային՝ առավել խոցելի կողմում կառուցված են պատերով ամրացված ևս երկու տերրաս։ Այս մասում հյուսիս-արևմտյան պարսպապատից մինչև բլրի հարավ-արևմտյան կողմի ժայռային ելուստում կառուցված է եղել ևս մի պատ, որից շատ քիչ բան է պահպանվել։ Քայքայվածության պատճառով ինչպես այստեղ, այնպես էլ նախորդ երկու ամրոցներում անհնար է որոշել պարսպապատերի լայնությունը։ Հյուսիս-արևմտյան երրորդ տերրասի պարսպի կենտրոնական մասում պահպանվել է չորս մետր լայնությամբ մուտքը, որը, կառուցված լինելով հարթության վրա, նման չէ նախկինում նկարագրվածներին, այլ մի բացվածք է ամրոցապատի մեջ՝ երկու կողմերում դրված սովորական շարքի քարերից անհամեմատ ավելի մեծ անկյունաքարեր։ Առաջին և երկրորդ տերրասներում մուտքերը չեն պահպանվել։ Բլրի մակերևույթին քարակույտերի միջից գտնվել են մի քանի ամբողջական և կոտրտված աղորիքներ, շատ նման Մասմալարում գտնվածներին, դրոների քարե կրկնակալներ, որոնք վկայում են բնակելի կառուցվածքների գոյության մասին, և արխայիկ ձևի բավական կոպիտ քարե մի կացին, բռնակի համար արված արտաքին միակողմանի ակոսով։ Կացնի այս ձևը հնարավորություն է տալիս իրը վերագրել էնեոլիթի և, գուցե, վաղ բրոնզի ժամանակաշրջանին, այսինքն՝ 2-րդ հազարամյակների սահմանագծին։ Այդ ժամանակով է թվագրվում նաև ամրոցի շրջակայքում գտնված էնեոլիթյան կավամանի բեկորը։ Սակայն այդ նյութը մեր կարծիքով հիմք չի տալիս ամրոցի կառուցումը վերագրելու էնեոլիթի կամ վաղ բրոնզի ժամանակաշրջանին, այլ վկայում է դեռևս այդ ժամանակներից բլրի բնակեցված լինելու մասին։

Ամենայն հավանականությամբ, ամրոցին ժամանակակից է և նրան է պատկանել բլրից ոչ հեռու գտնվող քարարկղային դամբարանաղաշտը, որտեղ մեր պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութը՝ դաշույնները, զարդերը և խնցեղենը վերաբերում են 2-րդ հազարամյակի վերջին։

*Այստեղ ևս, ինչպես Սեպրիկում, ամրոցապատերից ներս հայտնաբերվել է ավելի ուշ շրջանի՝ մ. թ. ա. 6—5-րդ դարերին պատկանող դամբարան[4], որը մեր կարծիքով վկայում է այն մասին, որ արդեն այդ ժամանակ կամ գուցե ավելի վաղ, ամրոցը լքված է եղել։*

*Այսպիսով, մեր նկարագրած երեք ամրոցներն էլ գոյություն են ունեցել 2-րդ հազարամյակի վերջին և մ. թ. ա. 8—6-րդ դարերում արդեն եղել են անբնակ։ Ինչ վերաբերում է նրանց կառուցման ժամանակին, այդ հարցը առայժմ մնում է բաց։ Նրանք կառուցվել են դժվարամատչելի վայրերում, տեղի ռելիեֆի սրտմիտ և ռացիոնալ օգտագործմամբ, կառուցողական և պաշտպանական որոշակի սկզբունքներով։*

С. А. Есаян. К. К. Кафадарян

## О НЕКОТОРЫХ ЦИКЛОПИЧЕСКИХ КРЕПОСТЯХ ШАМШАДИНА

**Резюме**

Настоящая статья посвящена описанию трех циклопических крепостей Шамшадинского района, расположенных близ села Кирги.

Крепость Масмалар (рис. 1) находится в 3 км юго-западнее села. Она расположена на круглом скалистом выступе, на высоте 45 м и окружена с трех сторон отвесными склонами. Крепость занимает территорию в 2,5 га, имеет 4 стены и хорошо укрепленный вход.

Вторая крепость — Сеприк (рис. 2) находится в 2 км южнее села и с трех сторон окружена глубокими ущельями. Ее площадь также равна 2,5 га, а высота—40 м. Крепость имеет 4 стены и хорошо укрепленный вход.

Крепость Гозлу (рис. 3) находится в 15 км северо-восточнее села Кирги, на правом берегу реки Ахнджи. Она расположена на холме треугольной формы и, повторяя его контуры, возвышается над окружающей местностью на 25—30 м. Защищена одной стеной, а с северо-западной стороны тремя стенами.

Обнаружение на территории крепостей Сеприк и Гозлу более поздних погребений и подъемного материала позволяют предположить, что крепости существовали в конце II тыс. до н. э. (время возникновения неизвестно) и были покинуты в VIII—VI вв. до н. э.

---

[4] С. А. Есаян, Погребение VI—V вв. до н. э. в горах Шамшадина, «Советская археология», 1965, № 3.